Հաստատված է
«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
փակ բաժնետիրական ընկերության
միակ բաժնետիրոջ կողմից՝
05.03.2026թ. N 05/03/2026-1 որոշմամբ
Գործադիր տնօրեն՝ Վաչիկ Գևորգյան

«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ

ԵՐԵՎԱՆ 2026

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգով սահմանվում են «Էփրիքոթ Կապիտալ» փակ բաժնետիրական ընկերության (ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված ներդրումային ընկերություն, լիցենզիայի համար՝ 0022, ՀՎՀՀ՝ 02871135, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 10, 110 տարածք) (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից Արժեթղթերի տեղաբաշխման ծառայությունների մատուցման կանոնները:

1.2. Տեղաբաշխողը Ծառայությունները մատուցում է համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի, Պայմանագրի, Տեղաբաշխողի ներքին իրավական ակտերի:

1.3. Սույն կանոնակարգը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Պայմանագիրը և սույն կանոնակարգը միասին համարվում են վավեր, կողմերի (Տեղաբաշխողի և Թողարկողի) համաձայնությունն ու կամքն ամբողջությամբ արտահայտող, գործադրելի և կողմերի կողմից կատարման ենթակա դրույթներ պարունակող փաստաթուղթ. ընդ որում, Պայմանագրի և սույն կանոնակարգի դրույթների միջև հակասության դեպքում գերակայությունը տրվում է Պայմանագրի դրույթներին:

1.4. Սույն կանոնակարգը հանդիսանում է հրապարակային փաստաթուղթ, որին կարող է ծանոթանալ ցանկացած շահագրգիռ անձ: Սույն կանոնակարգը ենթակա է հրապարակման Տեղաբաշխողի պաշտոնական կայքում:

1.5. Սույն կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

Ազդագիր. Թողարկողի և նրա Արժեթղթերի վերաբերյալ Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված տեղեկություններ պարունակող փաստաթուղթ, որի հիման վրա իրականացվում է Արժեթղթերի հրապարակային առաջարկը և (կամ) թույլտվությունը կարգավորվող շուկայում առևտրին,

Ածանցյալ ֆինանսական գործիք. Օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված գործարքները,

Աշխատանքային օր. շաբաթ կամ կիրակի, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ տոնական կամ հիշատակի ոչ աշխատանքային օր չհանդիսացող ցանկացած օրացուցային օր,

Ապահովված արժեթղթեր. Օրենքով նախատեսված՝ ակտիվներով ապահովված

Արժեթղթեր և ապահովված հիփոթեքային պարտատոմսեր,

Առաջարկի ծրագիր. Թողարկողի իրավասու կառավարման մարմնի ընդունած փաստաթուղթ, որի հիման վրա Թողարկողը նախատեսում է որոշակի ժամանակահատվածի ընթացքում իրականացնել նույն տեսակի և (կամ) դասի ոչ բաժնային Արժեթղթերի շարունակական թողարկումներ,

Արժեթղթերի առաջարկ. անձանց ուղղված ցանկացած ձևի հաղորդակցություն, որն Արժեթուղթը վաճառելու առաջարկ կամ Արժեթուղթը գնելու առաջարկ անելու հրավեր է պարունակում,

Արժեթղթերի հրապարակային առաջարկ. որակավորված ներդրող չհանդիսացող 100- ից ավելի անձանց կամ անորոշ թվով անձանց ուղղված Արժեթղթերի առաջարկը,

Արժեթղթերի հրապարակային տեղաբաշխում. Արժեթղթերի տեղաբաշխում հրապարակային առաջարկի միջոցով,

Արժեթղթերի տեղաբաշխում կամ Տեղաբաշխում. Տեղաբաշխողի կողմից Արժեթղթերի առաջին վաճառքը Ներդրողին,

Արժեթուղթ. Օրենքի 3-րդ հոդվածի 1-2-րդ և 5-7-րդ կետերով սահմանված գործիքները,

Գործադիր տնօրեն. Տեղաբաշխողի միանձնյա գործադիր մարմին, որը ՀՀ օրենսդրությամբ և Տեղաբաշխողի կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է Տեղաբաշխողի գործունեության ընթացիկ ղեկավարումը,

Երաշխավորված տեղաբաշխում. Արժեթղթերի տեղաբաշխման տեսակ, որի պարագայում Տեղաբաշխողը.

- գնում է Թողարկողի Արժեթղթերը նախօրոք պայմանավորված ժամկետում դրանք վերավաճառելու պայմանով,
- ստանձնում է Թողարկողի՝ նախօրոք նշված ժամկետում չտեղաբաշխված Արժեթղթերը գնելու պարտավորություն,

Թողարկող. անձ, որը թողարկել է Արժեթղթեր և դրանց տեղաբաշխման կազմակերպման նպատակով Տեղաբաշխողի հետ կնքել է կամ պատրաստվում է կնքել Պայմանագիր,

Խորհրդատվական ծառայությունների կանոնակարգ. Ընկերության լիազոր մարմնի կողմից հաստատված՝ «Խորհրդատվական ծառայությունների մատուցման կանոնակարգ» Տեղաբաշխողի ներքին իրավական ակտը, որով սահմանվում են

Տեղաբաշխողի կողմից հաճախորդներին Արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության և այլ խորհրդատվական ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները,

Խորհուրդ. Տեղաբաշխողի կառավարման մարմին, որը ՀՀ օրենսդրությամբ և Տեղաբաշխողի կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված հարցերի շրջանակներում իրականացնում է Տեղաբաշխողի ընդհանուր ղեկավարումը,

ԿԲ. ՀՀ կենտրոնական բանկ,

Ծառայություններ. Պայմանագրի հիման վրա Տեղաբաշխողի կողմից Թողարկողին մատուցվող՝ Արժեթղթերի տեղաբաշխման ծառայություններ,

Ծրագրային ազդագիր. Առաջարկի ծրագրի հիման վրա թողարկված ոչ բաժնային Արժեթղթերի, ինչպես նաև Ապահովված արժեթղթերի հրապարակային առաջարկի դեպքում Թողարկողի կամ Տեղաբաշխողի կողմից Ազդագրի փոխարեն հրապարակվող փաստաթուղթ,

Կանոնակարգ 4/06. ԿԲ խորհրդի որոշմամբ հաստատված «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» թիվ 4/06 կանոնակարգը,

Կանոնակարգ 4/07. ԿԲ խորհրդի որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» թիվ 4/07 կանոնակարգը,

Կարգավորվող շուկա. հանրության համար ուղղակիորեն կամ անուղղակիորեն մատչելի կազմակերպական, իրավական և տեխնիկական միջոցների համակարգ, որը կանոնավոր կերպով Արժեթղթերի, ինչպես նաև Ածանցյալ ֆինանսական գործիքների առքի և վաճառքի առաջարկների հանդիպման վայր կամ միջոց է կազմակերպում, տրամադրում, ապահովում կամ իրականացնում է Արժեթղթերով, ինչպես նաև Ածանցյալ ֆինանսական գործիքներով առևտրի կազմակերպման սովորաբար իրականացվող գործառույթներ: Կարգավորվող շուկան ներառում է բորսան և այլ կարգավորվող շուկաները,

Հաշվետու թողարկող. Թողարկող, որի կողմից թողարկված որևէ դասի Արժեթուղթը թույլատրված է ՀՀ տարածքում գործող Կարգավորվող շուկայում առևտրին,

Հաճախորդ. անձ, ով Ընկերության հետ կնքել է Բրոքերային և պահառության ծառայությունների մատուցման պայմանագիր,

Ներդրող. անձ, որին պատկանում է կամ որը նախատեսում է ձեռք բերել Արժեթուղթ,

Չերաշխավորված տեղաբաշխում. Արժեթղթերի տեղաբաշխման տեսակ, որի պարագայում Տեղաբաշխողն աջակցում է Թողարկողի Արժեթղթերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղաբաշխելու ընթացքին՝ չստանձնելով Թողարկողի չտեղաբաշխված Արժեթղթերը գնելու պարտավորություն,

Պայմանագիր. Տեղաբաշխողի և Թողարկողի միջև կնքված՝ Արժեթղթերի տեղաբաշխման պայմանագիրը,

Տեղաբաշխող. «Էփրիքոթ Կապիտալ» փակ բաժնետիրական ընկերություն ներդրումային ընկերությունը,

Տեղաբաշխողի պաշտոնական կայք. www.apricotcapital.am համացանցային կայքը, որում Տեղաբաշխողը հրապարակում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված, ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկատվություն,

Տեղաբաշխման իրականացման մասին հաշվետվություն. Տեղաբաշխողի կողմից Թողարկողին տրամադրվող՝ Պայմանագրի համապատասխան բաժնում նշված հաշվետվությունը,

Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ. առձեռն առաքում, հաղորդակցություն Պայմանագրի համապատասխան կետում նշված էլեկտրոնային փոստի հասցեների և հեռախոսահամարների, Տեղաբաշխողի և Թողարկողի նախնական փոխադարձ համաձայնությամբ՝ նաև էլեկտրոնային հաղորդակցության այլ կապուղիների (օրինակ՝ բջջային հավելվածների) միջոցով, փաստաթղթերի փոստային/սուրհանդակային առաքում և առձեռն ստացում՝ ստացման փաստը հավաստող ստորագրությամբ, փաստաթղթերի հրապարակում Տեղաբաշխողի պաշտոնական կայքում: Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցները հանդիսանում են այդպիսիք Կանոնակարգ 4/07-ի իմաստով,

Օրենք. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

1.6. Սույն կանոնակարգում օգտագործվող այլ հասկացությունները սահմանված չլինելու դեպքում ունեն Օրենքում և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերում սահմանված նշանակությունը, իսկ դրանցում սահմանված չլինելու դեպքում՝ միջազգային գործարար սովորույթներով այդ հասկացություններին տրվող նշանակությունը, եթե այլ բան ակնհայտորեն չի բխում կոնկրետ հասկացության կիրառման մասնավոր դեպքից:

1.7. Եթե սույն կանոնակարգի որևէ դրույթի կոնկրետ համատեքստից ակնհայտորեն այլ բան չի բխում, դրա դրույթների մեկնաբանության սկզբունքները հետևյալն են.

1.7.1. ցանկացած փաստաթղթի՝ ներառյալ, բայց առանց սահմանափակման՝ Պայմանագրի վկայակոչումը, մեջբերումը կամ դրան հղումը ենթադրում է տվյալ փաստաթղթի գործող տարբերակի, ներառյալ՝ դրա բոլոր փոփոխություններն ու լրացումները, մեջբերումը, վկայակոչումը կամ դրան հղումը, եթե տվյալ վկայակոչման, մեջբերման կամ հղման մեջ հատուկ նշումով սահմանված չէ հակառակը,

1.7.2. կետերին բոլոր հղումները վերաբերում են սույն կանոնակարգի կետերին,եթե հատուկ նշումով սահմանված չէ հակառակը,

1.7.3. գլուխների անվանումներն ունեն կողմնորոշիչ նշանակություն և չեն ազդում դրանց բովանդակության նշանակության և/կամ մեկնաբանության վրա,

1.7.4. եզակի թվով սահմանված հասկացությունները նաև արտահայտում են նույն հասկացության հոգնակի թիվը ու հակառակը, եթե այլ բան չի բխում հասկացության կիրառման մասնավոր դեպքից,

1.7.5. ցանկացած անձի վկայակոչումը վերաբերում է նաև օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված իրավաչափ հիմքերով նրան փոխարինող անձին, նրա ներկայացուցչին կամ իրավահաջորդին,

1.7.6. սույն կանոնակարգում օգտագործվող «սույն» բառը և դրա հոլովաձևերը, դրանցով կազմված արտահայտությունները և նման նշանակություն ունեցող այլ բառերը վերաբերում են տվյալ դրույթը պարունակող կետին, բացառությամբ «սույն կանոնակարգ» արտահայտությունից, որը ենթադրում է ամբողջ կանոնակարգը, և «սույն բաժին» արտահայտությունից, որը ենթադրում է սույն կանոնակարգի որևէ բաժինը:

1.8. Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Տեղաբաշխողի կողմից միակողմանիորեն՝ այդպիսի փոփոխությունից կամ լրացումից հետո փոփոխության/լրացման մասին Պայմանագրով սահմանված կարգով Թողարկողին ծանուցելու պայմանով:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Պայմանագրով և սույն կանոնակարգով կարգավորվում են Տեղաբաշխողի կողմից Թողարկողին Արժեթղթերի տեղաբաշխման Ծառայությունների մատուցման հետ կապված իրավահարաբերությունները:

2.2. Ծառայությունները մատուցվում են ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնակարգով, Տեղաբաշխողի այլ ներքին իրավական ակտերով և Պայմանագրով սահմանված կարգով:

2.3. Մինչև Պայմանագրի կնքումը Տեղաբաշխողի և Թողարկողի միջև կարող է կնքվել մտադրությունների հուշագիր, որտեղ սահմանվում են այն հիմնական պայմանները, որոնց հիման վրա պետք է մատուցվեն Ծառայությունները:

2.4. Մինչև Պայմանագիր կնքելը Տեղաբաշխողն իրականացնում է Թողարկողի ընդհանուր վիճակի ուսումնասիրություն: Ընդհանուր վիճակի ուսումնասիրության իրականացման կարգը, պայմանները և ծավալը սահմանվում են մտադրությունների հուշագրով: Այն դեպքում, երբ Թողարկողը հանդիսանում է նաև Հաճախորդ, Թողարկողի ընդհանուր վիճակի ուսումնասիրությունը Տեղաբաշխողի հայեցողությամբ կարող է իրականացվել Ընկերության «Գործարար հարաբերությունների հաստատման ընթացակարգ»-ով և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ընթացակարգ»-ով սահմանված կարգով՝ առանց Թողարկողի հետ մտադրությունների հուշագիր ստորագրելու անհրաժեշտության:

2.5. Ծառայությունների շրջանակը սահմանվում է Պայմանագրով և իր մեջ կարող է ներառել.

2.5.1. Արժեթղթերի Երաշխավորված կամ Չերաշխավորված տեղաբաշխման իրականացումը,

2.5.2. Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված Ծառայությունների մատուցում:

2.6. Ըստ Թողարկողի նախընտրության՝ Տեղաբաշխողը կարող է Թողարկողին մատուցել Արժեթղթերի հրապարակային կամ փակ տեղաբաշխման Ծառայություններ:

2.7. Տեղաբաշխողի կողմից տեղաբաշխումը կարող է իրականացվել՝

2.7.1. Կարգավորվող շուկայում (ֆոնդային բորսայում)՝ աճուրդների կազմակերպման միջոցով,

2.7.2. Կարգավորվող շուկայից դուրս՝ Ներդրողների բաժանորդագրության միջոցով կամ Ընկերության Բրոքերային (դիլերային) և պահառության ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններով սահմանված կարգով և պայմաններով Հաճախորդներից ստացված պատվերների հիման վրա՝ Տեղաբաշխումը բացառապես Հաճախորդների միջև իրականացնելու դեպքում:

2.8. Ֆոնդային բորսայում Արժեթղթերի տեղաբաշխումն իրականացվում է ֆոնդային բորսայի կանոններին համապատասխան:

2.9. Արտաբորսայական տեղաբաշխումը կատարվում է Օրենքին և դրա հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան: Արտաբորսայական գործարքների իրականացման առանձնահատկությունները սահմանվում են Պայմանագրով:

2.10. Սույն կանոնակարգի 2.7.2. կետով սահմանված՝ Ներդրողների բաժանորդագրության միջոցով Կարգավորվող շուկայից դուրս տեղաբաշխում կազմակերպելիս Տեղաբաշխողը Պայմանագրի հիման վրա բացում և վարում է Թողարկողի Արժեթղթերի ձեռքբերման հայտերի գրանցամատյան (եթե այլ բան չի սահմանվում սույն Կանոնակարգով) որում նշվում են՝

2.10.1. հայտի ներկայացման ամսաթիվը և ժամը,

2.10.2. Ներդրողի անունը և ազգանունը (անվանումը),

2.10.3. Ներդրողի անձնագրի (պետական գրանցման վկայականի) տվյալները,

2.10.4. Ներդրողի հասցեն (մշտական և բնակության տվյալ պահին),

2.10.5. հայտում նշված Արժեթղթերի գինը, քանակը և ընդհանուր գումարը,

2.10.6. Արժեթղթերի դիմաց վճարման կարգը,

2.10.7. ՀՀ օրենսդրությամբ և սահմանված այլ տեղեկություններ:

2.11. Տեղաբաշխողն իրավունք ունի ներդրումային ծառայություններ մատուցող այլ անձանց և ինստիտուցիոնալ ներդրողների հետ կնքել տեղաբաշխմանը մասնակցելու պայմանագրեր, ինչպես նաև նշված անձանց հետ ստեղծել տեղաբաշխման խմբեր:

2.12. Տեղաբաշխողը ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված կարգով

պատասխանատվություն է կրում իր գործողությունների կամ անգործության հետևանքով Թողարկողին և Ներդրողներին պատճառված վնասի համար:

3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Տեղաբաշխումն իրականացնելուց հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տեղաբաշխման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը Ընկերությունը պետք է Թողարկողին տրամադրի Տեղաբաշխման իրականացման մասին հաշվետվություն՝ սույն կանոնակարգի ՀԱՎԵԼՎԱԾ 1-ով սահմանված ձևով՝ եթե Պայմանագրով հաշվետվության ներկայացման այլ ձև չի սահմանվի:

3.2. Եթե Տեղաբաշխումն իրականացվում է մասնաբաժիններով, ապա Տեղաբաշխողը Տեղաբաշխման իրականացման մասին հաշվետվությունը ներկայացնում է ըստ յուրաքանչյուր մասնաբաժնի:

3.3. Թողարկողին ներկայացվող՝ Տեղաբաշխման իրականացման մասին հաշվետվությունը պետք է՝

3.4.1. ներառի հաշվետվության ներկայացման ամսաթիվը,

3.4.2. Վավերացված լինի Գործադիր տնօրենի ստորագրությամբ և Տեղաբաշխողի կնիքով:

3.4. Տեղաբաշխման իրականացման մասին հաշվետվությունը Թողարկողին է տրամադրվում երկու օրինակից. ընդ որում, մեկ օրինակը մնում է Թողարկողին, իսկ մյուս օրինակն առարկությունների բացակայության դեպքում «Հաշվետվության վերաբերյալ առարկություն չունեմ» նշագրմամբ և Թողարկողի/Թողարկողի լիազորված անձի ստորագրությամբ վերադարձվում է Տեղաբաշխողին՝ եթե Պայմանագրով հաշվետվության ներկայացման և հաստատման այլ կարգ չի սահմանվել:

4 ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆՆԵՐԸ

4.1. Արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման դեպքում Տեղաբաշխողը Պայմանագրի հիման վրա պարտավոր է Տեղաբաշխողի պաշտոնական կայքում հրապարակել Ազդագիրը (ծրագրային ազդագիրը) ոչ ուշ, քան Արժեթղթերի հրապարակային տեղաբաշխումը սկսելուց 3 (երեք) Աշխատանքային օր առաջ, բացառությամբ այն դեպքերի, երբ Օրենքով Ազդագրի հրապարակում չի

պահանջվում:

4.2. Տեղաբաշխողը Պայմանագրի հիման վրա ցանկացած անձի պահանջով, ոչ ուշ քան նման պահանջ ներկայացնելու օրվան հաջորդող Աշխատանքային օրը նրան անվճար տրամադրում է Ազդագրի տպագիր տարբերակը, բացառությամբ այն դեպքերի, երբ Օրենքով Ազդագրի հրապարակում չի պահանջվում:

4.3. Ազդագիրը հրապարակելուց անմիջապես հետո, սակայն ոչ ուշ, քան Ազդագրի հրապարակմանը հաջորդող առաջին Աշխատանքային օրը, Տեղաբաշխողն Արժեթղթերի հրապարակային առաջարկի վերաբերյալ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով և բովանդակությամբ հրապարակում է հայտարարություն, բացառությամբ այն դեպքերի, երբ Օրենքով Ազդագրի հրապարակում չի պահանջվում:

4.4. Եթե Ազդագրում, այդ թվում՝ դրա թարգմանության մեջ, որևէ էական փաստ է բաց թողնվել կամ խեղաթյուրվել, ապա Տեղաբաշխողը Թողարկողի հետ միասին կրում է նման բացթողման կամ խեղաթյուրման հետևանքով Ներդրողի կրած վնասները փոխհատուցելու համապարտ պատասխանատվություն:

4.5. Տեղաբաշխողն ազատվում է սույն կանոնակարգի 4.4. կետում նշված պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ բավարար և պատշաճ ուսումնասիրությունից հետո բավարար հիմքեր է ունեցել հավատալու և հավատացել է, որ Ազդագրի գրանցման պահին դրանում սխալ տեղեկատվություն կամ խեղաթյուրում (բացթողում) չի եղել, ինչպես նաև այն դեպքում, եթե վնաս կրած Ներդրողը Արժեթղթերը ձեռքբերելու պահին տեղյակ էր կամ ակնհայտորեն կարող էր տեղյակ լինել, որ Ազդագիրը պարունակում է սխալ և ապակողմնորոշիչ տեղեկատվություն, կամ նրանում էական փաստ է բաց թողնված կամ խեղաթյուրված:

4.6. Ազդագրի գրանցման հայտը ներկայացնելու պահից մինչև Արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման ժամկետի ավարտն Ազդագրում ներառվող տեղեկությունների էական փոփոխության, նոր էական հանգամանք կամ փաստ ի հայտ գալու կամ Ազդագրում էական անճշտություն, թերություն հայտնաբերելու դեպքում Թողարկողը կամ Տեղաբաշխողը պարտավոր է այդ մասին տեղեկանալու օրվանից կամ այն օրվանից, երբ նա ակնհայտորեն կարող էր տեղեկանալ տվյալ փոփոխության մասին, 5 (հինգ) Աշխատանքային օրվա ընթացքում ԿԲ ներկայացնել Ազդագրի լրացում:

4.7. Եթե Տեղաբաշխողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է Ազդագրի լրացում, որը կապված է Ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա Ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել Ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել բաժանորդագրության ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը Ներդրողին վաճառված Արժեթղթերն առնվազն նրա կողմից Արժեթղթերի ձեռքբերման գնով:

4.8. Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ԿԲ համաձայնությամբ՝ առավելագույնը 10 (տասը) Աշխատանքային օրով: Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից 1 (մեկ) Աշխատանքային օրվա ընթացքում տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Տեղաբաշխողը պարտավոր է դադարեցնել տեղաբաշխումը և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն Արժեթղթերը ձեռք բերած անձանց օրենքով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 (տասը) Աշխատանքային օրվա ընթացքում:

4.9. Տեղաբաշխողը պարտավոր է տեղաբաշխումը կասեցնելու և շարունակելու, տեղաբաշխումը դադարեցնելու և դրա ընթացքում ստացված միջոցները վերադարձնելու մասին տեղեկատվությունը հրապարակել առնվազն այն միջոցներով, որոնցով հրապարակվել է Արժեթղթերի հրապարակային առաջարկի մասին հայտարարությունը:

5 ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Աժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունները ներառում են.

5.1.1. Արժեթղթերի թողարկման պայմանների, շրջանառության, տեղաբաշխման և մարման սպասարկման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,

5.1.2. Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ժամանակագրական սխեմայի կազմում,

5.1.3. Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման հետ կապված որոշումների նախագծերի կազմում,

5.1.4. Թողարկողի գործունեության վերլուծություն,

5.1.5. շուկայի վերլուծություն և դրա հիման վրա Արժեթղթերի տեղաբաշխման օպտիմալ գնի (եկամտաբերության) որոշում,

5.1.6. Ազդագրի պատրաստում կամ պատրաստման հետ կապված խորհրդատվության տրամադրում,

5.1.7. Ազդագրի ներկայացում պոտենցիալ գնորդներին,

5.1.8. Ետ շուկայական աջակցություն:

5.2. Սույն կանոնակարգի 5.1 կետում նշված ծառայությունները կարող են մատուցվել ինչպես Պայմանագրի, այնպես էլ Կողմերի միջև կնքվող առանձին պայմանագրի հիման վրա:

5.3. Սույն կանոնակարգի 5.1 կետում նշված Ծառայությունների մատուցումը կարգավորվում է սույն կանոնակարգով, ինչպես նաև Խորհրդատվական ծառայությունների կանոնակարգով:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սույն կանոնակարգի բոլոր լրացումներն ու փոփոխությունները հաստատվում են Ընկերության լիազոր մարմնի կողմից (եթե Տեղաբաշխողի կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ) և ուժի մեջ են մտնում լիազոր մարմնի որոշմամբ սահմանված ժամկետում:

<u>ՀԱՎԵԼՎԱԾ 1</u>

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Տեղաբաշխման իրականացման վերաբերյալ

_____
Ընկերության անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը

_____
Թողարկողի անվանումը կամ նույնականացնող համարը

	Գործարքի Nկնքման ամսաթիվը (տարի/ամիս/օր)	Գործարքի կնքման ժամը (ժամ/րոպե)	Գործարքի կնքման վայրը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը, թողարկման համարը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը)	Պայմանագրով նախատեսված տեղաբաշխման ենթակա արժեթղթերի քանակը	Պայմանագրով նախատեսված տեղաբաշխման ենթակա արժեթղթերի ընդհանուր գումարը (անվանական արժեքով)	Փաստացի տեղաբաշխված արժեթղթերի քանակը	Փաստացի տեղաբաշխված արժեթղթերի ծավալը (անվանական արժեքով)	Փաստացի տեղաբաշխված արժեթղթերի ընդհանուր գումարը	Գանձվող միջնորդավճարի մեծությունը	Նշում, եթե գործարքի մյուս կողմը հանդես է եկել Ընկերությունը, վերջինիս խմբի մեջ գտնվող որևէ անձ, կամ Ընկերության մեկ այլ հաճախորդ, բացառությամբ եթե գործարքն իրականացվել է այնպիսի կարգավորվող շուկայում, որն ապահովում է գործարքի մի կողմի անհայտ լինելը մյուսի համար

Գործադիր տնօրեն՝ _____ _____

(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Կ.Տ. « » « » 20 թ.